Գիտաչափությունը Հասարակական և Հումանիտար Գիտություններում

Էդիտա Գզոյան
պ.գ.թ., Գիտական տեղեկատվության վերլուծության և մոնիթորինգի կենտրոնի փոխտնօրեն

Ավագ գիտաշխատող, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

Սեպտեմբեր 26 – 29, 2018
Երևան, Հայաստան

Կառուցվածք

- Ներածություն
- Գիտաչափությունը ՀՀԳ ոլորտում
- Սահմանափակումներ
- ՀՀ հրապարակումները ՀՀԳ ոլորտում

Գիտաչափություն

Գիտաչափությունը գիտության գնահատման քանակական մեթոդ է

Գիտաչափությունը հենվում է երկու առանցքային գաղափարի վրա:

- Հետազոտողի նպատակն է զարգացնել գիտելիքը/գիտությունը, ինչը ենթադրում է իր հետազոտությունների արդյունքների տարածում՝ հաղորդակցության տարբեր միջոցներով, ներառյալ տպագիր նյութի միջոցով;
- Գիտնականները պետք է հրապարակվեն՝ համբավ ձեռք բերելու և իրենց կարիերան զարգացնելու համար:

Գիտաչափության սահմանափակումները

- Սահմանափակ ծածկույթը
- Որոշ տեսակի նյութերի բացակայությունը
- Ամսագրերի դասակարգում ըստ ոլորտների
- ամսագրերի անվանումների փոփոխություն
- Նույն ձևով գրվող անուններ
- Հեղինակների թիվը և աշխատանքի բաշխումը նրանց միջև
- ավելորդ, ընտրովի, երկրորդային, բացասական և սխալ հղումները, ինքնահղումները

Գիտաչափությունը ՀՀԳ ոլորտում

ՀՀԳ գիտաչափական հետազոտությունների աքիլեսյան գարշապարն է:

Christian Gumpenberger, Johannes Sorz, Martin Wieland and Juan Gorraiz (2014)

ՀՀԳ ԲԳ տարբերվում է ոչ միայն հետազոտական առարկայով, այլ նաև գիտական հաղորդակցության սովորույթներով և մեթոդներով:

Moed, Luwel and Nederhof (2002)

ՀՀԳ ոլորտի առանձնահատկությունները

- Գիտելիքի տարածման դաշտն ավելի լայն է
- Հղումների առանձնահատկությունները
- ՀՀԳ հետազոտական խնդիրները, հետազոտական առարկան հաճախ բավականին տեղային են , լոկալ
- ՀՀԳ հրապարակումների լեզուն
- Թիրախային ընթերցողների խումբը սահմանափակ է
- Անհատ հեղինակների վս խմբակային աշխատանք
- Միջազգային համագործակցությունը քիչ է
- Գիտաչափական շտեմարանի ընտրությունը ՀՀԳ ոլորտի հետազոտությունների համար սահմանափակ է:

ՀՀԳ հաղորդակցության ձևերը

- Մենագրություններ, գրքեր
- Գրքերի գլուխներ
- Խմբագրված գրքեր
- Հոդվածներ
- Քաղաքական փաստաթղթեր
- Իրավական կարծիքներ
- Պաշտոնական կառավարական հրատարակություններ
- Կազմակերպությունների ներքին զեկույցները
- Թերթեր, ոչ գիտական ամսագրեր
- այլն

ՀՀԳ հաղորդակցության ձևերը

Լավագույն ԲԳ հետազոտությունները հրապարակվում են հոդվածներում, սակայն լավագույն ՀՀԳ հետազոտությունները կարող են տպագրվել գրքերում:

ՀՀԳ հրապարակումների առանձնահատկությունները

Nederhof et al. (1989) ուսումնասիրել են Նիդեռլանդներում ՀՀԳ ոլորտում 6 հաղորդակցման միջոցների բաշխվածությունը:

Արդյունք՝

Բոլոր բնագավառներում հաղորդակցման հիմնական միջոց էին հոդվածները և կազմում էին բոլոր հրապարակումների 35–57% -ը:

2-րդ – գրքի գլուխներ 21–34%:

Օրինակ, ընդհանուր լեզվաբանության մեջ 35% -ը հոդվածներն են, 34%՝ գրքի գլուխներ:

Դանիա, Andersen (2000) հետազոտությունը – հասարակական գիտություններում դանիացի գիտնականների տպագրությունների ¼-ը ամսագրերի հոդվածներ են:

Hicks (1999) հաշվարկով գրքերը կազմում են հասարակական գիտությունների հրապարակումների 40–60%-ը և ունեն 40% հղումներ:

ՀՀԳ ոլորտի հղումների առանձնահատկությունները

- Անհատական vs.խմբակային
- Քիչ հղումներ
- Հղումներ հաղորդակցման այլ ձևերին, որոնք գիտաչափական տեսանկյունից չեն հաշվվում:
- ՀՀԳ ոլորտի հրապարակումների ծերացումը և տպագրությունից հետո հետադարձ հղումների թիվը:

ՀՀԳ ոլորտի հղումների առանձնահատկությունները

- ԲԳ հղումների 85% ամսագրերի հոդվածներին են,
- իսկ ՀՀԳ ոլորտում ամսագրերի հոդվածներին հղումների թիվը 50% է:

- ՀՀԳ ոլորտի ամսագրերի վրա հղումների թիվը աճել է մոտ 22%, իսկ ԲԳ՝ միայն 6%:

- Հղումների նման աճ կա տնտեսագիտություն, կառավարում, հոգեբանություն և “այլ” հասարակական գիտություններում

- Մյուս կողմից ամսագրերի հոդվածների դերը պակասում է պատմություն, գրականություն և այլ հումանիտար գիտություններում:

ՀՀԳ ոլորտի հղումների առանձնահատկությունները

- սոցիոլոգիայի բնագավառում հղումների 39% գրքերի վրա են
- տնտեսագիտության մեջ՝ 24.5%
- բարձր էներգիայի ֆիզիկայի բնագավառում՝ 0.9 %

Small and Crane (1979)

ՀՀԳ ոլորտի հղումների առանձնահատկությունները

Հղումների տոկոսը ամսագրերին պատմության, գիտության փիլիսոփայության և հասարակական գիտություններում կազմում է 35%, իսկ իմունոլոգիայի բնագավառում՝ 94% :

Glänzel and Schoepfl (1999)

ՀՀԳ ոլորտի հղումների առանձնահատկությունները

WoS-ում ինդեքսավորված հրապարակումների վրա հղումների տոկոսը ըստ ոլորտների

Արդյունք՝

- բժշկական ոլորտի հրապարակումները մոտ 10 անգամ ավելի շատ են հղվում, քան հումանիտար ոլորտի հրապարակումները:

- ԲԳ և ինժեներիայում՝ 70%, հասարակական գիտություններում ՝ 50 %:

Larivière et al. (2006)

Սրանից բխում է, որ ՀՀԳ ոլորտի ուսումնասիրությունների համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև այլ տեղերից ստացված հղումները:

ՀՀԳ ոլորտի հողումների առանձնահատկությունները

- ԲԳ ոլորտում հողումների պատուհանը երկու-երեք տարի է, հրապարակումները արագ տարածվում են և արագ հովում

- ՀՀԳ ոլորտում հողումների պատուհանը մոտ երկու անգամ մեծ է , ուշ են ծերանում

Սրանից բխում է, որ այս ոլորտում հողումների գիտաչափական ուսումնասիրությունները պետք է կատարվեն առավել մեծ ինտերվալի համար:

ՀՀԳ հետազոտությունների տեղական բնույթը

- ՀՀԳ հետազոտություններն ավելի հաճախ առնչվում են տեղային և տարածաշրջանային խնդիրների հետ

Glänzel 1996; Hicks 1999; Hicks 2004; Ingwersen 1997; Nederhof et al. 1989; Nederhof and Zwaan 1991; Webster 1998; Winclawska 1996.

- Շատ դեպքերում ՀՀԳ- հասկացություններն ու թեմաները կարող են արտահայտվել և հասկանալ միայն այն մշակույթի լեզվով, որը ձևավորում է դրանք: Հետևաբար, ՀՀԳ գիտնականներն ավելի հաճախ են հրապարակում իրենց լեզվով և ազգային ամսագրերում:

ՀՀԳ հետազոտությունների լեզուն

- ՀՀԳ հետազոտությունները հրատարակվում են հիմնականում տեղական լեզուներով:

- Արդյոք WOS շտեմարանները ադեկվատ ծածկում են նաև ազգային ամսագրերը:

1. ԲԳ ամսագրերն անհամեմատ շատ են,
2. ՀՀԳ ոլորտում տարբերություններ կան ըստ բնագավառների

ՀՀԳ հետազոտությունների լեզուն

- SSCI and AHCI շտեմարանները ունեն անգլո-սաքսոնական կողմնապահություն, ԱՄՆ, ՄԲ, և ավելի քիչ Կանադական ամսագրեր:

- Շտեմարաններում ընդգրկված ամսագրերի մեծամասնությունը անգլերենով է, հատկապես ՀՀԳ ոլորտի ամսագրերինը:

- Ամենաշատը խմբագիրները ՄԲ 50 % -ից ավել
- Հետո ԱՄՆ, Շվեյցարիա, ՌԴ, Նիդեռլանդներ
- Ամսագրերի 90 % անգլերեն է

Archambault et al. (2006)

ՀՀԳ ոլորտի ընթերցողների թիրախային խումբը

- Միջազգային գիտական հանրություն
- Տեղական գիտական հանրություն
- Միջազգային ոչ գիտական հանրություն
- Տեղական ոչ գիտական հանրություն

ՀՀԳ հեղինակները: առանձնահատկություններ

- Անհատ հեղինակները գերակշռում են ՀՀԳ ոլորտում
- Միջազգային համագործակցությունը քիչ է

ՀՀԳ շտեմարաններ

- Social Science Citation Index
- Arts and humanities Citation Index

- UNESCO list

Շտեմարաններ

Web of Science Core Collection (WOS CC)

Հրապարակման տեսակը- articles, proceeding papers, notes, letters, reviews, meeting abstracts

Ժամանակահատվածը: 1991-2016 for WOS CC

ՀՀԳ մասնաբաժինն ՀՀ ընդհանուր հրապարակումների մեջ

ՀՀԳ հրապարակումներ - 1.2% WOS CC-ում

4.5 % - ԵԱՏՄ անդամ երկրների հետ համագործակցությունները,

20% -ԵՄ անդամ երկրների հետ համագործակցությունները,

75.5 % - այլ

ՀՀԳ հրապարակումների տեսակները



ՀՀԳ հրապարակումների առարկայական բաժանումը